Փաստ 1

Կանխամտածված սնանկության փաստով թիվ 83159711 քրեական գործը հարուցելու մասին 03.05.2011թ. որոշման մեջ արձանագրված է, որ, իբր, քրեական գործի հարուցման առիթ է հանդիս «ՀՀ ԿԱ ՊԵԿ Սպանդարյանի ՀՏ պետի 23.07.2010թ.» գրությունն այն մասին, որ «Արին կապիտալ» ներդրումային ընկերությունը 2010թ. ապրիլ, մայիս, հունիս, ամիսներին ԱԱՀ-ի հաշվարկներ չի ներկայացրել, այսինքն՝այդ ժամանակահատվածում իրականացրած տարածքների վաճառքի հարկերը ոչ միայն չի վճավել, այլ անգամ դրանց վերաբերյալ տեղեկությունն է թաքցրել: Սա ՊԵԿ-ի սիրելի ՀՀ քր օր. 205 հոդվածի հիմքով՝«Հարկերը …վճարելուց չարամտորեն խուսափելու» փաստով քրեական գործ հարուցելու առիթ է: Նշված հոդվածը սահմանում է՝«1.Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ .. փաստաթղթեր չներկայացնելու կամ … միջոցով, որը կատարվել է /տվյալ դեպքում՝ առանձնապես խոշոր/ չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:»:

Առ այսօր ՀՏ պետ Ս.Ավետիքյանի 23.07.2010թ. գրությանը ՊԵԿ-ի ղեկավարության կողմից ՀՀ քր օր. 205 հոդվածի հիմքով համապատասխան ընթացք չի տրվել: Այսինքն, գործ ունենք գրության հասցեատեր ՊԵԿ-ի ղեկավարի կողմից հանցագործության պարտակման հանցավոր արարքի և հարկեր հավաքելու հարցում անգործություն դրսևորելու հետ:

Փաստ 2

Համաձայն Մաշտոցի 33ա հասստրային գործի 28/07/2010 No ՍԱ-1358 գրության, ՀՀ ԿԱ ՊԵԿ Սպանդարյանի ՀՏ պետ Ս.Ավետիքյանը մինչ 2010թ. հուլիսի 28-ը դիմել է կադաստրի տեղեկատվական կենտրոնի ղեկավարին՝ «Արին կապիտալ» ներդրումային ընկերության կողմից օտարված տարածքների կադաստրային արժեքների ու օտարման պայմանագրերի ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման խնդրանքով:

Այնուհետև, օտարված գույքերի կադաստրային արժեքների (այսինքն՝գործարքի իրական գների 30-50%) վերաբերյալ կադաստրից ստացված տվյալների հիման վրա, համաձայն «Դատալեքս» տեղեկատվական կայքի, 31.08.2010թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Սպանդարյանի 1 ՀՏ -ի անունից հայցադիմում է ներկայացվում ՀՀ վարչական դատարան՝ընդդեմ «Արին կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ի՝ վերջինիցս հօգուտ Հայաստանի Հանրապետության <u>121.405.000 ՀՀ դրամ</u> բռնագանձելու պահանջով, որից. ավելացված արժեքի հարկի գծով՝ 121.359.300 ՀՀ դրամ և սոցիալական վճարի գծով՝ 45.700 ՀՀ դրամ: Ընդ որում, ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունն առաջացել էր <u>2010 թվականի ապրիլ-հունիս ամիսների ավելացված արժեքի հարկի հաշվարկների հիման վրա</u>:

Հայցադիմումը 06.09.2010թ. վարույթ է ընդունվել, հարուցվում է թիվ ՎԴ/3059/05/10 վարչական գործը:

Վարչական դատարանի **<u>06.09.2010թ. որոշմամբ արգելանք է դրվել «Արին կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ի «Գույքի, դրամական միջոցների վրա»</u>**: Իսկ 08.09.2010թ. դադարում է Եսայանի տնօրեն լինելու լիազորությունները /ԵԱՆԴ 1724/02/10 գործով վճռով հաստատված հանգամանք/, քանի որ նա 07.09.2007թ.-ին 3 տարով էր նշանակվել տնօրեն:

Սակայն հարկային մարմնի ղեկավարները չարամիտ համաձայնության գալով Վլ.Մանգասարյանի /տնօրեն Եսայանին նրանք կարող է անգամ չճանաչեն/ հետ, արգելանքի կատարողական թերթը կատարման չեն ներկայացնում ԴԱՀԿ և հարկային տեսուչներին ուղարկում են նոտարական գրասենյակ ու նրանց ներկայությամբ իրականացվում է Մաշտոցի 33/1 շենքի տարածքների առուվաճառքի գործարքներ, այն է՝ անտեսելով դատարանի **<u>06.09.2010թ. որոշումը,</u>** օժանդակողի դերում Մանգասարյանի

համար նպաստավոր պայման են ստեղծում տարածքների թալանն իրականացնելու համար: Արդյունքում, սեպտեմբերի 16-ին,17-ին ,18-ին ավելի քան 10 միավոր անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրեր են կնքվում, այդ թվում՝ թիվ 2,14,16,22 բնակարաններինը, որոնցից վերջինը ձևակերպվում է Վլադիսլավ Մանգասարյանի եղբայր Ռուբեն Մանգասարյանի անվամբ:

Թիվ ՎԴ/3059/05/10 վարչական գործի վարույթը 01.02.2011թ. վճռով կարճվում է:

Փաստ 3

Առկա և հետագայում գոյանալիք հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու մտադրությամբ 2010թ. փետրվարից -2010թ. հունիսի 16-ը ներառյալ, Վլ.Մանգասարյանի նախաձեռնությամբ, նրան պատկանող «ՎՄԳ գրուպ» ՓԲԸ-ի և «Արին կապիտալ» ներդրումային ընկերության միջև կնքված կեղծ փոխառությունների և կապալի պայմանագրերի հիման վրա «Արին կապիտալ» ներդրումային ընկերությունը ծանրաբեռնվում է 1.669.074.807,73 /մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունինը միլիոն յոթանասունչորս հազար ութ հարյուր յոթ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական/ ՀՀ դրամ պարտավորություններով և այն ապահովվում է՝ 18.06.2010թ. 4213 և 4214 գրավի պայմանագրերով գրավադրված Մաշտոցի 33/1 հասցեի 4827,38քմ և Մաշտոցի 33ա հասցեի 1708,6քմ անշարժ գույքերով:

Վերը նշված գույքի մեծ մասն օտարվում է, իսկ շուրջ 2000քմ-ի չափով գրավադրված մնացած անշարժ գույքի առկայության պայմաններում կազմակերպվում է ընկերության կանխամտածված սնանկությունը և թիվ 0061/04/10 սնանկության գործով դատարանի 2010թ. հոկտեմբերի 20-ի վճռով ընկերությունը սնանկ է ճանաչվում:

Թիվ 0061/04/10 սնանկության գործով 22.03.2011թ. հաստատվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Սպանդարյանի ՀՏ-ի ներկայացրած **104.952.676 ՀՀ դրամի** պահանջը: Սակայն կանխամտածված սնանկության փաստով հարուցված թիվ 83159711 քրեական գործով 03.05.2011թ. որոշման մեջ արձանագրված է, որ հարկային պարտավորությունը կազմում է **139.300.000 ՀՀ դրամ**: Այսինքն, ըստ հարկային մարմնի տվյալների, սնանկության գործով պահանջը ներկայացված է 34.347.324 ՀՀ դրամով պակաս: Սա փաստում է այն մասին, որ հարկային մարմնի կողմից պահանջ ներկայացնելը ձևական բնույթ է կրել, քանի որ հստակ հաշվարկ չի կատարվել:

Սակայն այս դրվագով էական այն է, որ սնանկության գործով հարկային մարմինը երբեք հարկ չի համարել մասնակցել տարբեր դատական ատյաններում քննվող մեկ տասնյակից ավելի դատական նիստերին կամ անդրադառնալ սնանկության վարույթի շրջանակներում «Արին կապիտալ» ներդրումային ընկերությանը պատկանող շուրջ 2մլն դոլար իրական արժեքով գույքը ապօրինի պահանջների դիմաց «ՎՄԳ գրուպ» ՓԲԸ-ին հանձնելուն:

Այսինքն հարկային մարմինն անգամ **104.952.676 ՀՀ դրամի պահանջին հետամուտ չի եղել** և իր անգործությամբ 2-րդ անգամ նպաստել է թալանին և որևէ ճիգ չի գործադրել պետությանը հասված վնասը վերականգնելու ուղղությամբ: